ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշտիի 1

№ 1485-Ա «23» ապրիլի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 27.02.2024 թվականին հայտարարված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/52 ծածկագրով սարքեր սարքավորումների գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 05.04.2024 թվականին Մասնակցին ծանուցվել էր պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 12.04.2024 թվականը ներառյալ, չեն ներկայացվել պայմանագիրը և վերը նշված ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/52 ծածկագրով գնման ընթացակարգը 5-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/52 ծածկագրով ընթացակարգը 5-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 16.04.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ